

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

22 հունվարի 2019թ.  
ք.Երևան

N 17-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2019 թվականի Փետրվարի 17-ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ.

1) 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 5-րդ կետով սահմանված կարգով,

2) 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Իմ քայլը դաշինք՝ 23 -ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 7-ական

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 4-ական

ա. 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	Բնակավայր	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Արեվարույր		11/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ուրցածոր	Ուրցածոր (նախկին)	13/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ուրցածոր	Ուրցածոր (նախկին)	13/2	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ուրցածոր	Շաղախ (նախկին)	13/3	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Ուրցածոր	Լանջանիստ (նախկին)	13/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Մարգարա		15/3	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Վարդանաշեն		15/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/3	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/4	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/5	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Վարդենիս	Վարդենիս (նախկին)	21/6	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Վարդենիս	Այրք (նախկին)	21/7	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Ակունք		21/8	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ակունք		21/9	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ձորագետ		24/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նոր Գեղի		28/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նոր Գեղի		28/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Նոր Գեղի		28/3	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Սարագյուղ (նախկին)	30/1	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Բավրա (նախկին)	30/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Սիգավետ (նախկին)	30/3	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Աշոցք	Թավշուտ (նախկին)	30/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Աշոցք	Ղազանչի (նախկին)	30/5	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Մեծ Սեպասար (նախկին)	30/6	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Փոքր Սեպասար (նախկին)	30/7	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Կրասար (նախկին)	30/8	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Աշոցք	Աշոցք (նախկին)	30/9	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Աշոցք (նախկին)	30/10	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Աշոցք	Զոյգաղբյուր (նախկին)	30/11	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Աշոցք	Կարմրավան (նախկին)	30/12	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Մալիշկա		36/1	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Մալիշկա		36/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ

2. Սույն որոշման 1-ին կետի 2-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2019 թվականի հունվարի 28-ից մինչև հունվարի 30-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ.Մուկուչյան**